

## Կոտայքի մարզպետն աշխատանքային այցով Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրում էր

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանն իր խորհրդական Հայկ Ալեքսանյանի և օգնականի՝ Ստեփան Բաղդասարյանի հետ աշխատանքային այց է կատարել Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայր:

Համայնքի ավագանու անդամ Անահիտ Առաքելյանի նախաձեռնությամբ Պռոշյանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում հանդիպում է կազմակերպվել, որի ընթացքում համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանի, Պռոշյանի վարչական ղեկավար Սևակ Գաբրիելյանի, համայնքի ավագանու անդամների, ոլորտի պատասխանատուների և դպրոցի տնօրինության հետ քննարկվել են միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման հնարավորությունները:

Դպրոցն աշխատում է գերծանրաբեռնված՝ երկու հերթափոխով. դպրոց են հաճախում շուրջ 696 աշակերտներ և նոր մասնաշենքի կառուցման անհրաժեշտությունն օրակարգային է դառնում:

Մարզի ղեկավարը շրջայց է կատարել, դիտարկել դպրոցի այն տարածքը, որը կարող է նոր մասնաշենքի կառուցման հիմք դառնալ, ապա ներկաների հետ քննարկել ամենասեղմ ժամկետներում՝ ծրագիրն իրականացնելու տարբերակներն ու ուղիները:

Միաժամանակ, 2023 թվականի ամռանը նախատեսվում է նաև Պռոշյանի մշակույթի տան լիարժեք կահավորում և հետևաբար նոր խմբակների բացում, ինչը կլուծի բնակավայրի երեխաների զբաղվածության և ժամանցի հարցը: